առեցեալն ես, ըստ մեծի մասին անօգուտ և անտպավայել լինէր» (Նույն տեղ, էջ 332)։

2. ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԵՐԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Ելնելով թղթի ձեռք բերման վերոհիշյալ դժվարություններից՝ Սիմեոնը ձեռնարկում է թղթի գործարան հիմնելու աշխատանքներին։ Դեռևս 1772 թվին, Պոլսում գտնվող Մադրասեցի Զաքիկենց Գրիգորից խնդրում է՝ թղթաշեն վարպետներ ուղարկել Էջմիածին։ Երկու տարի անցնելուց հետո վարպետներ ձեռք բերելու հույսը կորած, Հնդկաստանի հայոց նվիրակ Փիլիպպոս վարդապետին խնդրում է՝ թարգմանել տալ և իրեն ուղարկել «զթղթաշինության խրատըն», որով դուցէ, կարելի լինի տեղում գործարան հիմնել, առանց օտարների օգնության. ահա նույն հիշատակարանից մի կտոր «այլ և յանցեալ ամին զթղթաշինութեան խրատն թարգմանեցուցեալ էր նա և յղեալ առ սրբազան վեհն, յորմէ ոչինչ իմացեալ եղև, զի թարգմանութիւնն և գրեալն կարի խառնափնդոր էին, վասն որոյ պատուիրեալ նմա զի տէր Աւետիսն վերակացու կարգեալ ի վերա թարգմանութեանն, զթղթաշինութեան խրատն հայերէն բառիւ և պարզ ոճիւ վերստին լաւ թարգմանի թարգմանել տացէ և առ մեզ յղեսցէ. և եթէ այսու ևս ոչ լինիցի հնար, այնուհետև դայլ իմն հնարս հոգասցէ. զի թերևս զթղթաշինութեան կերպն ի ձեռն բերցուք» (Նույն տեղ էջ 308)։

Երեք տարվա նամակագրություններից ու բանակցություններից հետո՝ վերջապես հաջողվում է նույն Զաքիկյանի միջոցով Փարիզից հրավիրել ֆրանսիացի թղթաշեն երկու վարպետներ՝ (Մուսիօ Բեյսոն և Մուսիո Դեսիօռ), որոնք՝ Պոլսում պայմանագիր կնքելով նույն Զաքիկյանի հետ, մեկնում են Էջմիածին և, տեղ հասնելով, 1775 թ. մարտից սկսում են գործարանի կառուցումը։

Զաքիկյանին, Պոլսի պատրիարքին և այլոց Սիմեոն կաթողիկոսի կողմից ուղարկված նամակներից պարզվում է, որ ֆրանկ վարպետները և նամանավանդ նրանց թարգման Ստեփանն ամեն կերպ աշխատում են ձգձգել գործը, դրամ կորզել և թղթաշինության արհեստը էջմիածնականներից գաղտնի պահել։ Պոլսի պատրիարք Զաքարիա վարդապետին գրած նամակում Սիմեոն Երևանցին հայտնում է. «Եւ թարջիման (թարգման) Ստեփանն... ամենևին ոչ պիտոյանար մեզ զի միշտ արբեցության և որկրամոլության հետևէր։ Եւ մանավանդ աղթարմա գոլով՝ ոչ կամէր, զի զթղթաշինության արհեստն ի ս. Աթոռոջս հաստատեսցի, քանզի՝ ի մէջ խոսակցութեան դրանս թղթաշինացն խայինութեամբ թիւր մեկնէր մեզ, զոր նշանօք իմանայաք մեք» (Դիվ. Հայոց. պատմ. գիրք Ը. էջ 364)։ Ինչ վերաբերում է վարպետներին, նրանք այլ և այլ պատրվակներ են հնարում, ինչպես թղթի վատորակ լինելու, այնպես էլ իրենց կողմից աշակերտներ պատրաստելու պարտավորությունը չկատարելու համար. բայց թերացման հիմնական պատճառն այն էր, որ նրանք թղթաշինության արհեստը տարածելու իրավունք չեն ունեցել և այդ գործին ձեռնարկել են գաղտնի կերպով։ Նույն Զաքարիա վարդապետին ուղղված՝ Սիմեոնի նամակում, որը վերաբերում է վարպետներից փոքրի՝ Մուսիո Դեսիօռի Ֆրանսիա վերադարձնելուն, կարդում ենք. «Նա և պատուէր, զի օր մի յառաջ հանցէ զնայ անտի (Պոլսից), որ շատ չմնասցէ անդ և ի Ֆռանկսզի նաւ մի դիցե, այլ ուրիշ ազգի նաւով յղեսցէ. իսկ եթէ ուրիշ ազգի նաւ ի պատրաստի չգտանիցի ի Զմիւռնին յղեսցէ անտի շուտով, զի նա անդ յայլ նաւ մտեալ երթիցէ յուրիշ երկիր՝ և անտի իւր քաղաքն, որպես և իւր աղերսանքն էր. քանզի ասէին թէ՝ զմեզ ուղարկողքն թղթաշինութեան անուամբ չյղեցին, այլ ուրիշ պատճառաւ՝ և այլ անուամբ, ի ծածուկ պահելով թղթաշինութեան անունն առ երկիւղի։ Արդ թէ իմացեն ասէ՝ թէ ես այսու անուամբ եմ եկեալ աստ, զչարիս հասուցանեն ինձ և մեր ուղարկողացն» (Նույն տեղ, էջ 529)։

1776 թ. հունվարի 4-ին արտադրվում է առաջին թուղթը, սակայն, վատորակ. վարպետների սիմուլյացիան պատժելու համար՝ Սիմեոնը սպառնում է գործի դնել